ԿԱՐԾԻՔ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝
2023-2027 թթ.զարգացման ռազմավարական ծրագրի աշխատանքային տարբերակի

Նախ նշեմ՝ ներկայացված ռազմավարական ծրագրի (ՌԾ) աշխատանքային փաթեթի քննարկման և կարծիքների ներկայացման համար տրված ժամկետը խիստ սեղմ է, իհարկե, եթե խոսքը նորմալ և խորը վերլուծական կարծիք գրելու մասին է, այլ ոչ թե ձևական կողմը պահպանելու ձգտումը: Պատմության և իրավագիտության ամբիոնի էլ. Հասցեից ՌԾ-ի նախնական տարբերակը ստանում եմ նոյեմբերի 7-ին, հեռախոսակապով ամբիոնի վարիչի պաշտոնակատարը տեղեկացնում է, որ մինչև նոյեմբերի 8-ը պետք է կարծիքները ներկայացվեն, իսկ նոյեմբերի 8-ին ռեկտորի օգնականն է անձամբ էլ. Փոստով ուղարկում ՌԾ-ը և տեղեկացնում, որ «ՌԾ-ի տարբերակի քննարկումը տեղի է ունենալու ս.թ. նոյեմբերի 9-ին՝ ժամը՝ 16:00-ին, ՇՊՀ-ի ռեկտոր պարոն Եր. Սերոբյանի աշխատասենյակում»: Տպավորություն է ստեղծվում, որ համալսարանի շահակիցների հետ հետադարձ կապը ձևական է, այն ակնկալիքով, որ սեղմ ժամկետում շատ քչերը կարծիքներ կներկայացնեն:

Ցանկացած հաստատության կամ ոլորտի զարգացման ռազմավարական ծրագիր մշակելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է ներկայացնել հաստատության կամ ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, արտաքին մարտահրավերները՝ նշելով փաստաթղթերը, առկա ռեսուրսները և ռիսկերը, այնուհետև առաքելությանը համապատասխան սահմանել նպատակներ, դրանց համապատասխան խնդիրներ, խնդիրների լուծման գործողությունների պլան՝ համապատասխան ժամանակացույցով (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ) և գնահատման ցուցիչներով, որոնք քանակական կամ որակական առումով պետք է չափելի լինեն:

Խնդիրներ

1. Բուհի գործունեության վերաբերյալ որևէ հակիրճ վերլուծություն՝ փաստաթղթին կից կամ ներածությունում, չի ներկայացվել, ավելին՝ ՌԾ-ի աշխատանքային տարբերակում հաշվի չեն առնվել արտաքին մարտահրավերները, ինչպես նաև «Կրթության և գիտության մասին օրենք»-ի նախագծում ամրագրված պահանջները և ՀՀ կառավարության ծրագրի «Կրթություն» և «Գիտություն» բաժնի գերակայությունները:
2. Ներկայացված աշխատանքային տարբերակը ոչ մի կապ չունի ՌԾ կոչվելու հետ, քանի որ աղավաղված են դասագրքային ճշմարտությունները: Առկա չէ որևէ ժամանակացույց, իսկ գնահատման ցուցիչները շատ դեպքերում կապ չունեն դրված նպատակի կամ ձևակերպված խնդրի լուծման գործողությունների վերջնարդյունքի հետ:

Եթե ՌԾ-ին կից պետք է դեռ ներկայացվի գործողությունների պլան, ապա անհասկանալի է այստեղ կատարողականի ցուցիչներ ներառելը: Ցանկացած դեպքում անհրաժեշտ է գնահատել ամրագրված գործողությունների իրականացման արժանահավատությունը, որն առանց ժամանակացույցի (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ) ուղղակի հնարավոր չէ պատկերացնել և հանգել կատարողական ցուցիչներում ամրագրված վերջնարդյունքներին:

Բերեմ երկուակն հայտ օրինակ, երբ գործողությունը և կատարողական իցուցիչները միմյանց հետ կապ չունեն:

Օրինակ 1. Առաջին նպատակի խնդիր 1-ի համար ներկայացված լուծումը կամ գործողությունը. *Կրթական ծրագրերի (այդ թվում՝ աշխատանքի վրա հիմնված) և վերջնարդյունքների, ինչպես նաև վերջիններիս կիրարկումն ապահովող ներքին նորմատիվի իրավական ակտերի բովանդակային վերանայում և բարելավում՝ շահառուների և շահակիցների կարիքներին համահունչ:*

Ցանկացած ընթերցող ակնկալում է, որ որպես կատարողականի ցուցիչ պետք է տեսնենք համապատասխան **լրամշակված /մշակված որևէ ներքին իրավական ակտի հաստատում**: Սակայն, կատարողական ցուցիչներում նման որևէ կետ առկա չէ:

Օրինակ 2. Առաջին նպատակի խնդիր 1-ի համար ներկայացված լուծումը կամ գործողությունը.ՄԿԾ-ների լավարկմանը միտված մեխանիզմների և ընթացակարգերի մշակում և ներդրում:

Կատարողականի ցուցիչ պետք է լիներ ընթացակարգերի և մեխանիզմների հաստատումը գիտական խորհրդի կողմից որպես փաստաթուղթ և ապա նոր կիրառման մասին այլ ցուցիչ: Սակայն որևէ նման միտք չենք կարող տեսնել կատարողական ցուցիչներում:

Ամբողջ փաստաթղթում բազմաթիվ են նման դեպքերը, որ ամրագրված գործողությունը և կատարողական ցուցիչները միմյանց հետ որևէ կապ չունեն: Ժամանակի սղության պատճառով դժվար է հիմա շատ օրինակներ շարադրելը, քանի որ համարակալված չեն խնդիրների ենթակետերը և դրանց համապատասխան կատարողականի ցուցիչները, որ կոնկրետ նշեմ համապատասխան դեպքեր, չնայած որ դրանք բազմաթիվ են:

3. Կատարողականի ցուցիչներն ինքնանպատակ չեն և պետք է լինեն **չափելի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման ժամանակ**: Կատարողականի ցուցիչները պետք է ունենան **կա՛մ քանակական,կա՛մ շոշափելի որակական արտահայտման ձևեր**: Ամբողջ փաստաթղթում սա ուղղակի զավեշտի է հասել: Ներկայացված կատարողական ցուցիչներից հազվադեպ կարող ենք չափելիներ գտնել, մնացածներն ուղղակի ոչ չափելի շարադրված ինչ-որ մտահայեցողական վարժություններ են:

Օրինակ՝ Ժամանակակից տեխնիկական միջոցների ձեռքբերում և գրադարանային ֆոնդի աստիճանական թվայնացում:

Կատարողական ցուցիչ՝ Ուսումնական նյութ հանդիսացող հիմնական գրականության թվայնացված և շահառուներին ու շահակիցներին հասանելի էլեկտրոնային բազա:

Կարդալիս արդեն անհասկանալի է դառնում այս կատարողականի ցուցիչը: Նշեմ, որ ՊԴ կազմն ունի ակադեմիական ազատություն և ամեն տարի կարող է փոփոխել ուսումնական նյութ հանդիսացող հիմնական գրականությունը: Անհասկանալի է ոչ միայն գրվածի իմաստը, այլ նաև չափելի չէ ո՛չ քանակական,ո՛չ որակական իմաստով:

4. **ՇՊՀ-ի առաքելություն:** ՇՊՀ-ի առաքելության մեջ, որպես առաքելության շրջանակ, նշված է նեղ տարածաշրջանը, սակայն որպես բուհ՝այն չիկարող մրցունակ լինել անգամ ՀՀ-ում գործող այլ բուհերի հետ, ավելին՝առաքելությունն իրականությանը չի էլ համապատասխանում: Եթե տասնամյակներ առաջ դա կարող էր լինել բուհի առաքելության շրջանակ, ապա այսօրվա կրթության ոլորտի մարտահրավերների առկայության պայմաններում նման բուհ պատկերացնելն ուղղակի անհնար է: Այսօր, երբ բուհերի գերակշիռ մասն իրենց առաքելության մեջ ամրագրում են միջազգային չափանիշերին համապատասխան մասնագետ պատրաստելը, մենք, որպես բուհ, դուրս չենք գալիս տարածաշրջանի կարիքներից, ինչն անհասկանալի է և չի էլ համապատասխանում իրականությանը, քանի որ առաքելության հիմնական շրջանակը ՀՀ-ն է, այլ ոչ թե նեղ մարզը կամ տարածաշրջանը: **Ավելին՝առաքելության մեջ գիտության շրջանակն անգամ ՀՀ-ով չի կարող սահմանափակվել, ուր մնաց տարածաշրջանով: Անհրաժեշտ է վերանայելշրջանակը:**

ՇՊՀ-ի առաքելության մեջ նշված է՝ « … ՀՀ աշխատաշուկային համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի պատրաստում»՝ չնշելով՝ բարձրագույն կրթության եռաստիճա՞ն համակարգում, թե՞ միայն բակալավրիատն ու մագիստրատուրան են նկատի առնվել: Անհրաժեշտ է հստակեցնել: Օրինակ՝ ՀՀ աշխատաշուկայի պահանջներին բավարարող եռաստիճան կրթական համակարգով մասնագիտական կադրերի պատրաստում…կամ երկաստիճան համակարգով:

Մեր բուհի առաքելության մեջ արդյո՞ք մտնում է շարունակականկրթությանապահովումըկամայլկրթականծառայություններիմ ատուցումը: Սա ևս պետք է հստակեցնել, քանի որ բուհն իրականացնում է ուսուցիչների վերապատրաստում, դիմորդների նախապատրաստական դասընթացներ, աշխատակիցների վերապատրաստումներ և այլն:

Ընդհանրացնելով ասեմ, որ անչափ թույլ է գրված առաքելությունը՝ դուրս գալով այսօրվա կրթության և գիտության մարտահրավերներից:

Հարկավ, ներկայացված ՌԾ-ում խնդիրները շատ են, իսկ մեզ տրամադրված ժամանակը շատ քիչ, ավելի լուրջ խնդիրներ վերհանելու համար: Նախ մեզ տրամադրված չէ կամ կայքում տեղադրված չէ ինստիտուցիոնալ վերահավատարմագրման փորձագիտական զեկույցումներ առված թերությունների վերացման ծրագիրը՝ համապատասխան ժամանակացույցով, որտեղից հասկանալի կդառնային նաև բուհի առաջնահերթությունները: Չնայած որ բուհը պայմանական է վերահավատարմագրվել, սակայն այս ներկայացված ՌԾ-ում տեսանելի չեն բացասական գնահատված ուղղությունների առաջնահերթությունները, և տեսանելի չեն գործողությունների ժամկետները:

Հետևություն. ներկայացված ՌԾ-ն ամբողջությամբ պետք է վերանայվի:Նախ անհրաժեշտ է ճշտել փաստաթղթի կառուցվածքը, այնուհետև բովանդակային կողմը՝ առավել ևս վերաձևակերպելով կատարողականի ցուցիչները՝ հետևելով ցուցիչների սահմանման կանոնին:

08.11.2022թ. Պամության և իրավագիտությանամբիոնիդոցենտ,

պատմ. գիտ. դոկտորՀովհաննեսԽորիկյան